ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

ՑՈՒՑՑ

Գորկու փողոցի վրա, Մայակովսկու հրապարակի մոտերքը, արտակարգ լռություն է: Ցերեկվա պայծառ արևը շողում է ավտոմեքենաների լաքած կողերի վրա, բայց փաղփաղում, որովհետև մեքենաները նույնպես կանգնած են:

Բոլորը նայում են վերև, բայց ոչ երկնքին: Մարդկանց հայացքը հառած է մի բազմահարկ շենքի յոթերորդ հարկի լուսամուտներից մեկին: Ոչ թե հետաքրքրություն կամ մի այլ բան, այլ սարսափն ու տագնապն են թառել դեմքերի վրա:

Լուսամուտի դրսակողմի գոգում, փեղկերից դուրս, կանգնել է երկու տարեկան մի երեխա: Գոգն զգալիորեն թեք է, իսկ երեխան չի էլ բռնել փեղկը, չի էլ հենվել դրան: Կանգնել և զարմացած նայում է աշխարհին, ուր նա դեռ չի մտել, բայց որտեղից կարող է ընդմիշտ հեռանալ մի րոպե հետո, մի վայրկյան հետո…

Ոչ ոք չի խոսում բարձրաձայն, բոլորն զգուշանում են, որ երեխան չվախենա, չշփոթվի և չկորցնի հավասարակշռությունը: Բոլորն զգուշանում են գրավել նրա հետաքրքրությունը որևէ շարժումով, սպասում են, որ նա ձանձրանա նայելուց և մտնի ներս:

Բայց անգործությամբ չէ, որ սպասում են նրանք: Մի քանի մարդ ներս են վազել շենք, որ բարձրանան յոթերորդ հարկ և զգուշացնեն ընտանիքի անդամներին՝ նրանց սպասող աղետի մասին: Մարդիկ սպասում են սրտատրոփ: Վայրկյանները թվում են րոպեներ, րոպեները՝ ժամեր, իսկ երեխան դեռ կանգնած է լուսամուտի դրսակողմի թեք գոգում, անդունդի եզրին: Մի՞թե գնացողները դեռ չեն հասել յոթերորդ հարկ: Իսկ եթե հասել են, բայց դուռը փակ է և ոչ ոք չկա՝ բացի երեխայի՞ց…

Բազմաթիվ երիտասարդներ, մայթի վրա կանգնած, պատրաստվել են իրենց ձեռքերի վրա ընդունելու համար երեխային՝ եթե նա ընկնի: Նրանց միջև գնում են տագնապած, կցկտուր խոսակցություններ.

— Կարող է դիպչել հինգերորդ հարկի քիվին և վնասվել...

— Հարվածը մեղմելու համար հարկավոր է, որ նա ընկնի ոչ թե մի քանի, այլ շատ ձեռքերի վրա: Ապա, մոտեցեք…

— Մի քիչ այս կողմ, մի քիչ այս կողմ, նա կարող է ընկնել ոչ թե ուղղահայաց, այլ կոր գծով…

— Դուք ֆիզիկա չգիտեք:

— Հենց ֆիզիկայի հիման վրա եմ ասում:

Գորկու փողոցը բազմամարդ փողոց է, մեծ շարժման փողոց: Ամեն վայրկյան հասնում և կանգ են առնում նորանոր մարդիկ, ամեն վայրկյան ավելի են երկարում փողոցն ի վեր և փողոցն ի վար կանգնած մեքենաների շարքերը: Միայն հատուկենտ մեքենաներ, սուսիկ սողոսկելով կանգնածների արանքներով, դանդաղ սահում են անհետաձգելի գործերով: Տեղ հասած նորանոր մարդիկ, առանց իմանալու, որ ուրիշներն արդեն բարձրացել են բնակարան՝ հայտնելու երեխայի ընտանիքի անդամներին, իրենք էլ են վազ տալիս շենք: Անշուշտ, լիֆտն ու սանդուխքները լցված են մարդկանցով:

Հանկարծ սենյակում, երեխայի ետևում, երևաց մի բարձրահասակ կին: Թեև նրա մազերն ամբողջովին սպիտակ էին և նա, ակներևաբար, երեխայի տատն էր և ոչ թե մայրը, բայց միանգամայն առույգ էր և դեռ բավական ջահել:

Հազիվ էր կինը, հանգիստ ու կամացուկ շարժումով երեխային խլելով, անհետացել սենյակի խորքում, երբ Գորկու փողոցում պոռթկաց համատարած աղմուկը.

— Հիմա՛ր…

— Հանցագո՛րծ…

— Հիմա՛ր…

— Նկուղում պիտի ապրեիր դու և ոչ թե յոթերորդ հարկում:

— Հիմա՛ր: Երևի իր համար նստած, «Թագուհի Մարգո» էր կարդում:

— Հիմա՛ր, հիմա՛ր, հիմա՛ր…

Սուլոցներ, շվոցներ, քարերի պես շպրտված ծանր ու կոպիտ բառեր: Խախտելով ընդունված կարգը ճչակում էին նաև մեքենաները: Ճանապա՞րհ էին պահանջում, թե՞ իրենք էլ էին մասնակցում ցույցին՝ պառավի դեմ:

Մի կին, նոր միայն, ակնհայտ ուշացումով, նվաղեց ու հենվեց պատին՝ հիշելով քիչ առաջ երեխային սպառնացող մահացու վտանգը: Վտանգի րոպեներին նա լարված էր իր բոլոր նյարդերով և միայն հիմա վրա հասավ ռեակցիան: Ոչինչ, կանցնի: Ամուսինն ու երկու կին զբաղվեցին նրանով: Մի քիչ այն կողմում գազաջուր վաճառող կինը, սպիտակ խալաթով, մոտ վազեց և բաժակը մեկնեց նրան: Կինը խմեց և ժպտաց բոլորին: Անցավ:

— Շուտ, գնանք տուն, մեր երեխան էլ այնտեղ մենակ է մայրիկի հետ:

— Կարիք չկա,— հանգստացրեց ամուսինը,— մեր մայրիկը թույլ չի տա այդպիսի բան: Եվ հետո, մենք ապրում ենք ոչ թե յոթերորդ հարկում, այլ՝ վեցերորդ:

— Ինչպե՞ս կարող ես կատակել այսքանից հետո,— նախատում է կինը:— Գնաք տուն, բարի եղիր: Ես վախենում եմ մենակ գնալ, հանկարծ մի բան է պատահել…

Ամուսինն ուզում է նորից կատակել, բայց նայելով կնոջ տագնապած, աղերսական դեմքին, կտրուկ համաձայնվում է և ինքն է շտապեցնում հիմա.

— Գնանք, թանկագինս, թե չէ դու կգժվես, գնանք, գնանք...

Ցույցը պառավի դեմ տևեց ընդամենը մի րոպե, գուցե և մի քիչ պակաս: Գորկու փողոցում նորից վերականգնվեց նորմալ կյանքը: Սլանում են մեքենաները, քայլում են մարդիկ: Եվ միայն, որպես քիչ առաջ պատահածի վերջին արձագանքներ, լսվում են քայլող մարդկանց խոսքերը.

— Բայց կեցցե պառավը, նա խելոք կին էր: Եթե զգույշ չմոտենար երեխային, նա կարող էր վախենալ և ընկնել վար:

— Իսկ ինչպիսի՜ բնածին հավասարակշռություն... Անպայման էկվիլիբրիստ է դառնալու այդ երեխան:

— Ինչ է դառնալու՝ հայտնի չէ, մի բան կդառնա անշուշտ։ Կարևորն այն է, որ նա ապրում է։